ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Ջամալ Միրզոյանը, Սերժիկ Մուրադովը, Անզոր Շաբոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վազիր Ավդալյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 21-ի N 3 արտահերթ նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին,

2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին

3.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2022թ. ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

4.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 12-ի N3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

5.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 12-ի N4 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

6.Ալագյազ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու 2023 թվականի չափորոշիչները սահմանելու մասին,

7.Ալագյազ համայնքի 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատելու մասին,

8.Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայության համար գումար հատկացնելու մասին,

9.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Սադունց և Շենկանի բնակավայրերի գերեզմանատների ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայության համար գումար հատկացնելու մասին,

10.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր Ճարճակիս բնակավայրերի ներբնակավայրային փողոցների սալիկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման

ծառայության համար գումար հատկացնելու մասին,
11.Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության համար մրցույթ հայտարարելու մասին,
12.Ալագյազ համայնքի Միրաք և Միջնատուն վարչական բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների հեղինակային հսկողության համար գումար հատկացնելու մասին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզպետի 2023 թվականի հունվարի 26-ի N01/1/00347-2023 գրությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 12-ի «Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2023 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» N3 որոշման մեջ «340000 (երեք հարյուր քառասուն հազար)» թվերը և բառերը փոխարինել «430000 (չորս հարյուր երեսուն հազար)» թվերով և բառերով:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26/

Լսեցին
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Ալագյազ համայնքի՝ «Ճարճակիս բնակավայրի գազաֆիկացում», «Ալագյազ, Ճամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի ներբնակավայրային փողոցների սալիկապատում» և «Ալագյազ, Ջամշլու, Սադունց և Շենկանի բնակավայրերի գերեզմանատների ցանկապատում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Լսեցին
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ, ՋԱՄՇԼՈՒ, ՍԱԴՈՒՆՑ ԵՎ ՇԵՆԿԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և

միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 55 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի միջև 13 դեկտեմբերի 2022 թվականին կնքված N ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-22/07 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծախսեր» ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1375000 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Սադունց և Շենկանի բնակավայրերի գերեզմանատների ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայության գումար, որպես համայնքի մասնաբաժին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱԳՅԱԶ, ՋԱՄՇԼՈՒ, ՄԻՋՆԱՏՈՒՆ, ԿԱՆԻԱՇԻՐ ԵՎ ՃԱՐՃԱԿԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի միջև 13 դեկտեմբերի 2022 թվականին կնքված N ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-22/07 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ճանապարհներ» ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1225000 (մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Միջնատուն, Կանիաշիր և Ճարճակիս բնակավայրերի փողոցների սալիկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայության գումար, որպես համայնքի մասնաբաժին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի հիման վրա համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկը, ինչպես նաև Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայտարարել վարձակալության համար մրցույթ Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի համար՝ ըստ հավելված 1-ի
2.Վարձակալության ամսական վճարների մեկնարկային գները սահմանել տվյալ հողատեսքի զուտ եկամտի 15 %-ի

չափով մուծվող նախավճարի 5%-ի չափով,
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

Լսեցին
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՐԱՔ ԵՎ ՄԻՋՆԱՏՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 89-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 6-ի «Ալագյազի համայնքի Միրաք և Միջնատուն բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատման նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 27 որոշումը և ՀՀ կառավարության 1 դեկտեմբերի 2022թ. N 1856-Ն որոշումը, ինչպես նաև Ալագյազ համայնքի ղեկավարի և «Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ-ի միջև 2 սեպտեմբերի 2022 թվականին կնքված N ՀՀԱՄ-ԱՀ-ՄԱԾՁԲ-22/04-2 պայմանագիրը, ինչպես նաև հաշվի առնելով ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի 18.11.2022թ. N1 ակտը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին ՀՀ կառավարության կողմից հատկացված սուբվենցիոն գումարը (Ալագյազ համայնքի Միրաք և Միջնատուն վարչական բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ) Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Սուբվենցիաներ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 603338 (վեց հարյուր երեք հազար երեք հարյուր երեսունութ) ՀՀ դրամ փոխանցել «Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ-ին՝ Ալագյազ համայնքի Միրաք և Միջնատուն վարչական բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ հեղինակային հսկողության գումար, որպես կառավարության կողմից տրված սուբվենցիոն գումարի մասնաբաժինը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Լսեցին
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

Լսեցին
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2022 թվականի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24/

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25/

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 4 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզպետի 2023 թվականի հունվարի 26-ի N01/1/00347-2023 գրությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 12-ի «Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանի 2023 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N4 որոշման հավելվածի մեջ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասը և հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Ալագյազ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու 2023 թվականի չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28/

Լսեցին
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՃԱԿԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 40 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի միջև 13 դեկտեմբերի 2022 թվականին կնքված N ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-22/06 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ալագյազ բնական գազ» ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1480000 (մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ փոխանցել «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման ծառայության գումար, որպես համայնքի մասնաբաժին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ԱԼԻԽԱՆ ՀԱՄԵՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ _____

Նիստն արձանագրեց՝ Վազգեն Ավդալյանը _____